«Միջին գլխաւորապէս լինում է բուրդ գզելուց. նշանակուած օրը ամէն մին իր սանդերքը (բուրդ գզելու պողպատէ ճաղերով գործիքը) վերցրած գնում է հարեւանի տունը, ծալապատիկ նստում են շարքով, տանտիկինը բուրդը բերում բաժանում է եւ նրանք կտոր վերցընելով, առաջ երկու ձեռքով ֆծծում են՝ բաց են անում խճճուած մաղերը եւ սանդերքի ճաղերից անցնելով, փափկացնում, աղրից մաքրում, շատ մանր մաղերը թողնում սանդերքի վրայ, երկայններին կիսալուսնաձեւ տալով, ծնկների տակ գնում»:

«Այդ կիսալուսնաձեւ բուրդը ասում է մալանջ, իսկ ճաղերի վրայ մնացած տականքը՝ ֆոլֆ, որը գործադրում են դոշակներ (անկողին) լցնելու»:

«Մալանջները իրար հետ միացնելով հատ պարանի պէս քիչ ոլորում են, կծկում ձմերուկի մեծութեամբ եւ պատատուկ շինում: Այդ պատատուկները քանդելով, նորից գզում են, աւելի մաքուր մալանջներ շինում եւ դրանից նախարակով թել մանում»:

«Ճախարակը ունի հետեւեալ մասերը՝ թոփը (անիւը), որի վրայ ամրացրուած է կոռնը (թեւը), թեւի վրայ շրտրվիկը, որ ձեռով պտտցնում են: Ճախարակը ունի ոտներ, ոտների վրայ հագցրած է պողպատէ իլիկը. իլիկի մասերն են կոլոր լիսեռը եւ կաշուի ականջը, որը ծառայում է իլիկը բարձրացնելու կամ ցածացնելու համար: Իլիկի ծայրին ձախ ձեռով բռնած մալանջը մօտեցնելով, իսկ աջ ձեռով շրտրվիկը պտտցնելով, թելը փաթաթւում է վրան, այդպէս շարունակում են, մինչեւ որ թելը լիսեռի ամբողջ երեսը ծածկում է եւ դէպի իլիկի ծայրը գնալով կոնաձեւ է ստանում: Այդ կոնաձեւ հաւաքուած կծիկը, որին վեստ են ասում, հանում են իլիկից, եթէ թելը բարակ է ու ուզում են հատ լինի, երկու վեստերի թելերը անցնում են ճախարակի իլիկին (ասեղին) եւ նորից մանում, վերտեր շինում»(16):

Իսկ Թրքահայաստանի մէջ բուրդի եւ թելի պատրաստութեան համար թանկագին տեղեկութիւններ կու տայ Ե. Լալայեան, անդուդական ազգագիրը: Ինք անձամբ այցելած է Վասպուրականի Շատախ գիւղը, որուն բնակիչները 250 տուն գուտ հայ էին, որոնցմէ 140 տունը շալագործութեամբ կը զբաղէր, եւ որոնց արտադրութիւնը նշանաւոր էր:

Հոս կ'արտագրեմ Շատախի մէջ բուրդ ներկելու մասին տրուած ընդարձակ ծանօթութիւն մը: Որքան որ ասիկա Շատախի բուրդէ շալերուն համար գործածուած բուրդի ներկումին կը վերաբերի, այնուհանդերձ գորգերու բուրդին ներկումէն չի տարբերիր, որով ասիկա կարելի է գորգերու բուրդին ներկումն ալ նկատել:

(16) «Հանդ. Ամս.», 1928, էջ 475–476: Բուրդ գզելը եւ գորգ գործելը Ղարաբաղում: Կ. Կ. Մելիք Շահնազարեանց: